



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 ապրիլի 2015թ.

N 77 -Ս

ք.Ստեփանակերտ

ԹԻՎ 2 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Վ.ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիվ 2 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Վլադիմիր Ռոմանի Դոլուխանյանը 2015 թվականի ապրիլի 16-ին ներկայացրել է նոտարական կարգով վավերացված ինքնաբացարկի մասին դիմում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է հանձնաժողովի նիստում:»:

Նույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝ 1) կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին:»:

Վերոգրյալի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել թիվ 2 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Վլադիմիր Ռոմանի Դոլուխանյանի գրանցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ